Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Պ-278-12.09.2019,02.12.2019-ՏՏԳԲ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի թիվ ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասը.

1) «3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքը» բառերը փոխարինել «համայնքը՝ անկախ բնակչության թվաքանակից» բառերով

2) 8-րդ կետի «ձևաթղթերը» բառից հետո լրացնել «և տրամադրված թույլտվությունների քանակի և տեսակի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ կետեր.

«15) համայնքում առկա համայնքային կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակտային տվյալներ) և/կամ դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում),

16) համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները,

17) համայնքում պետական և համայնքային միջոցներով իրականացվող շինարարությունների հետ կապված տեղեկատվությունը:

18) համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվությունը»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. 20000 կամ ավել բնակիչ ունեցող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերն հրապարակվում են համայնքի համացանցային պաշտոնական կայքում, որը պետք է ապահովված լինի իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի հետ փոխգործելիությամբ:»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում»:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի «10000» թիվը փոխարինել «3000» թվով:

Հոդված 4.

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2) Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

3) Սույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև 3-րդ հոդվածով նախատեսված դրույթները 2022 թվականի հունվարի 1-ից սկսում են տարածվել բոլոր համայնքների վրա՝ անկախ դրանց բնակչության թվից:

Պ-278-12.09.2019,02.12.2019-ՏՏԳԲ-011

Երկրորդ ընթերցում
Լրամշակված

ՏԵՂԵԿԱՆՔ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի թիվ ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասը.

1) «3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքը» բառերը փոխարինել «համայնքը՝ անկախ բնակչության թվաքանակից» բառերով

2) 8-րդ կետի «ձևաթղթերը» բառից հետո լրացնել «և տրամադրված թույլտվությունների քանակի և տեսակի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ կետեր.

«15) համայնքում առկա համայնքային կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակտային տվյալներ) և/կամ դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում),

16) համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները,

17) համայնքում պետական և համայնքային միջոցներով իրականացվող շինարարությունների հետ կապված տեղեկատվությունը:

18) համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվությունը»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. 20000 կամ ավել բնակիչ ունեցող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերն հրապարակվում են համայնքի համացանցային պաշտոնական կայքում, որը պետք է ապահովված լինի իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի հետ փոխգործելիությամբ:»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում»:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի «10000» թիվը փոխարինել «3000» թվով:

Հոդված 4.

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2) Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

3) Սույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև 3-րդ հոդվածով նախատեսված դրույթները 2022 թվականի հունվարի 1-ից սկսում են տարածվել բոլոր համայնքների վրա՝ անկախ դրանց բնակչության թվից:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 11. Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

5. ~~3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքը~~ համայնքը՝ անկախ բնակչության թվաքանակից պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որի ստեղծումն ու վարումն ապահովում է համայնքի ղեկավարը՝ սույն օրենքով և համայնքի ավագանու սահմանած կարգով: Համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինեն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

(*Պ-278-12.09.2019-ՏՏԳԲ-011/1*) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկներ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Լ. Նազարյան	**Հոդված 1**.	**Հոդված 1**. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանաբար փոխարինել 1-ին հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով: Նույն հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. **Հոդված 1**.«Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի թիվ ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասը. 1) «3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքը» բառերը փոխարինել «համայնքը՝ անկախ բնակչության թվաքանակից» բառերով	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն	

Լ. Նազարյան	**Հոդված 4**	***Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.*** **Հոդված 4**. 1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2) Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: 3) Սույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետով նախատեսված դրույթը 2022 թվականի հունվարի 1-ից սկսում է տարածվել բոլոր համայնքների վրա՝ անկախ դրանց բնակչության թվից:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն	
Բագրատյան	**Հոդված 4**	***Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետը լրացնել .*** 3) Սույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև 3-րդ հոդվածով նախատեսված դրույթները 2022 թվականի հունվարի 1-ից սկսում է են տարածվել բոլոր համայնքների վրա՝ անկախ դրանց բնակչության թվից:		